ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

17-ը մարտի 2018թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,

ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության ՀՀ և ԱԵ ՈՒՀ-երում կադրերի պատրաստման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Վ. Իրիցյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **«Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար՝ գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 **17.03.2018թ.**հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ **«Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և **«Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ին** 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններում հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ	Վ. Գասպարյան
գնահատող՝	Գ. Ուստյան
գնահատող՝	Վ. Իրիցյան
գնահատող՝	Ս. Նիկոլյան
գնահատող՝	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան

17.03.2018թ.